

**V.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ,
ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀՀ ԱՎԾ-ն շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն: 2003 թ. ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են հետևյալ նախագծերը.

1. Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-4» պայմանագրի շրջանակում (միջոցառումների իրականացում).

- բիզնես-ռեգիստր,
- բիզնես-վիճակագրություն.
ա. արդյունաբերության վիճակագրություն,
բ. ծառայությունների վիճակագրություն,
գ. ներդրումների վիճակագրություն,
- էներգետիկայի վիճակագրություն,
- արտաքին առևտրի վիճակագրություն,
- ազգային հաշիվների վիճակագրություն,
- աշխատանքի վիճակագրություն,
- ժողովրդագրական վիճակագրություն.
ա. մարդահամարի նախապատրաստում,
բ. միգրացիա,
- դասակարգումներ,
- հրապարակումներ,
- վիճակագրական տեղեկատվության սպառողներ,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- սարքավորումների ձեռք բերում,

2. ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի (ՄԱԶԾ) հետ համատեղ.

- մարդկային զարգացման ազգային զեկույցներ,

3. ՄԱԿ-ի Մանկական Հիմնադրամի հետ համատեղ.

- 2003 թ. «ՄՈՆԵ» շարքի տարածաշրջանային մոնիթորինգային զեկույց,

4. Համաշխարհային Բանկի ֆինանսավորմամբ.

- «Աղքատության մոնիթորինգ. ՀՀ տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազայի ստեղծում» Աղքատության հաղթահարման ռազմավարության համար կարողությունների ստեղծման ֆինանսավորման համար /ՏՖ 050823/ բազմադոնոր դրամաշնորհի շրջանակում,

5. ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- ԱՄՆ-ի հաշվառումների բյուրոյի փորձագետների աջակցությամբ՝ «Աջակցություն 2001 թ. ազգային մարդահամարին»,

- Սոցիալական բարեփոխումների ծրագրի (ՊԱԴԿՈ) հետ համատեղ.
 1. Սոցիալ-տնտեսական և առողջապահության վիճակագրության կայուն հաշվետվական ընթացակարգի զարգացում. տնային տնտեսությունների եկամուտների և ծախսերի հետազոտության գծով տվյալների բազայի կատարելագործում և համակարգում,
 2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարությունների անձնակազմերի համակարգչային գրագիտության վերապատրաստման դասընթացների անցկացում,

6. Ծվեդական միջազգային համագործակցության զարգացման գործակալության ֆինանսավորմամբ.

- Ծվեդիայի վիճակագրական ծառայության հետ համագործակցության նախագիծ «Սոցիալական վիճակագրությունը Հայաստանում» խորագրով՝
 1. Ժողովրդագրական վիճակագրություն,
 2. Հաշմանդամների կենսապայմանների վիճակագրություն,
 3. Շրջակա միջավայրի վիճակագրություն,
 4. Գյուղացիական տնտեսությունների ռեգիստր,
 5. Ժամանակի օգտագործման հետազոտություն:

2000թ.-ից սկսած, Եվրոստատը նախաձեռնել է վարել երկրների հաշվետվությունների համակարգ՝ ըստ յուրաքանչյուր երկրի: Հաշվետվությունների կազմման նպատակն է նպաստել վիճակագրության դերի բարձրացմանը նորանկախ երկրներում, ինչպես նաև արտացոլել վիճակագրական ծառայությունների կողմից ձեռք բերված արդյունքները: Ձեկույցները ներկայացնում են նաև այն դժվարությունները, որոնց հետ հարկադրված են բախվել վիճակագրական ծառայությունները, և վերջիններիս առջև ծառայած ու լուծում պահանջող հիմնախնդիրները: Ձեկույցները հնարավորություն են ընձեռում նաև գնահատելու ընթացիկ իրավիճակը վիճակագրական համակարգի զարգացման բնագավառում և անհրաժեշտ են տեխնիկական աջակցության հետագա ծրագրերի մշակման հիմնավորման համար: Ձեկույցները պարունակում են համագործակցության ընդհանուր գնահատականներ, ինչպես նաև հիմք են հանդիսանում նոր ֆինանսական միջոցների լոբբինգի համար:

ՀՀ ԱՎԾ-ն ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում պատրաստել է «Հայաստանի վերաբերյալ երկրի հաշվետվությունը 2002թ.» զեկույցը (անգլերեն և ռուսերեն լեզուներով, 38 էջ ընդհանուր ծավալով):

2003թ. ՀՀ ԱՎԾ 16 աշխատակիցներ 10 արտասահմանյան երկրներում (Եգիպտոս, Վրաստան, Ղազախստանի Հանրապետություն, ԱՄՆ, Ծվեյցարիա, Ավստրիա, Ճապոնիա, Մոլդովա, Իռլանդիայի Հանրապետություն, Ռուսաստանի Դաշնություն) վերապատրաստվել և մասնակցել են տարբեր միջոցառումների հետևյալ թեմաներով՝ ընդհանուր ժողովրդագրություն, շրջակա միջավայրի վիճակագրություն /թափոնների դասակարգման և գույքագրման հարցերով/, 2001թ. Հայաստանի մարդահամարի արդյունքների հրապարակում /սոցիոսակների ծրագրային մշակման գծով/; պաշտոնական վիճակագրության հիմնական սկզբունքների կիրառություն; Եվրոպայի

վիճակագիրների գիտաժողովի 51-րդ լիակազմ նստաշրջան, եռամսյա ազգային հաշիվների վիճակագրություն, վճարային հաշվեկշռի վիճակագրություն, պաշտոնական վիճակագրության հավաքագրում ու վերլուծություն; գյուղատնտեսական վիճակագրության համակարգը շուկայական տնտեսության պայմաններում, սոցիալական ապահովության քարտերի ներդրում, աղքատության կրճատման ռազմավարությունների շրջանակներում գենդերային հիմնախնդիրներ, սպառողների կողմնորոշման խնդիրներ, ԱՊՀ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 27-րդ նիստ և ԱՊՀ երկրներում 2004 թ. տվյալներով միջազգային համադրումներ:

Նշված միջոցառումների համար նախապատրաստվել և դրանցում հրապարակվել է 9 զեկույց մոտ 59 էջ ընդհանուր ծավալով:

2003թ. փետրվարի 3-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ կողմից կազմակերպված «Հազարամյակի զարգացման նպատակների զեկույցի նախագծի» քննարկմանը /ք. Երևան/:

2003թ. փետրվարի 13-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստանի ազգային հզորությունների կարիքների գնահատում գլոբալ բնապահպանական կառավարման համար» /ԱՀԳ/ ծրագրի մեկնարկային աշխատաժողովին /ք. Երևան/:

2003թ. մարտի 13-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման նպատակներ /ՀՁՆ/» ծրագրի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված կանանց միջազգային օրվան նվիրված կլոր սեղան քննարկմանը /ք. Երևան/:

2003թ. մարտի 17-18-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ կողմից «Թմրամիջոցների չարաշահմանն առնչվող տեղեկատվական համակարգեր» Հարավային Կովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի շրջանակում կազմակերպված հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. մարտի 18-19-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Երեխաների իրավունքների պաշտպանության անկախ մեխանիզմներ/Եվրոպական փորձ» հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. մարտի 21-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Վաղ մանկության ինտեգրացված զարգացում» թեմայով աշխատանքային հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. մարտի 21-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է «Բերրինգ Փոինթ» կազմակերպության կողմից կազմակերպված կանխատեսումների աշխատանքային խմբի հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. մարտի 25-27-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ և ՀՀ կառավարության «Մոնիթորինգի և վերլուծության /ՄՎ/ համակարգի կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակում կազմակերպված «Մարդկային աղքատության հետազոտություն» սեմինար-խորհրդակցությանը /ք. Ծաղկաձոր/:

2003թ. ապրիլի 1-3-ը ՀՀ ԱՎԾ 4 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ առողջապահության նախարարության և Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմակերպված «ՌՈՒՏԵՆԴՈՄ» ուսուցանող մեքենայացված համակարգի վերաբերյալ սեմինարին /ք. Երևան/:

2003թ. ապրիլի 5-6-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիթորինգի կենտրոնի կողմից կազմակերպված Եվրամիության և ՄԱԶԾ ֆինանսավորմամբ ՀՀ-ում իրականացվող «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի» շրջանակում աշխատանքային խմբի հանդիպմանը /ք. Ծաղկաձոր/:

2003թ. ապրիլի 11-ին ՀՀ ԱՎԾ 5 աշխատակիցներ մասնակցել են ՊԱԳԿՈ-ի 2002թ. նոյեմբերի հետազոտության արդյունքների և 2003թ. հունվար-փետրվարի հիմնական տնտեսական ցուցանիշների ներկայացում» թեմայով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. ապրիլի 17-ին ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են Միացյալ Թագավորության բնական պահուստների ինստիտուտի, Գրինվիչի համալսարանի և Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման դեպարտամենտի կողմից կազմակերպված «Գյուղատնտեսական ոչ-ֆերմերային տնտեսությունը և ապրելամիջոցի զանազանակերպումը Հայաստանում և Վրաստանում» թեմայով հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. ապրիլի 28-30-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում ծրագրավորման գործընթացին» թեմայով դասընթացին /ք. Երևան/:

2003թ. մայիսի 20-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի և ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կորորդինացման բաժնի կողմից կազմակերպված «Ազգային համակարգման կենտրոնի և ճյուղային նախարարությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալ կազմակերպումը» խորագրով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. մայիսի 27-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Եվրամիության և ՄԱԶԾ կողմից կազմակերպված թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիթորինգի կենտրոնի աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. հունիսի 3-4-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ - Եվրոպական Միության (ԵՄ) Գործընկերության և Համագործակցության Համաձայնագրի (ԳՀՀ) շրջանակում ՀՀ- ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական 4-րդ նիստին /ք. Երևան/:

2003 թ. հունիսի 3-4-ը ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից կազմակերպված ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ սեմինարին /ք. Երևան/:

2003թ. հունիսի 3-6-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի և ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կորորդինացման բաժնի կողմից կազմակերպված «Ծրագրի կառավարման ունակությունների զարգացում» թեմայով դասընթացին /ք. Երևան/:

2003թ. հունիսի 12-13-ը ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության և Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Աղքատության հաղթահարման ռազմավարության ծրագրի մոնիթորինգը Հայաստանում» թեմայով խորհրդակցությանը /ք. Երևան/:

2003թ. հունիսի 13-14-ը ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված «Պետական գնումներ» թեմայով սեմինարին /ք. Ծաղկաձոր/:

2003 թ. հունիսի 30-ից հուլիսի 3-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կոորդինացման բաժնի կողմից կազմակերպված «ԵՄ ծրագրերի ցիկլի կառավարում» խորագրով սեմինարին /ք. Ծաղկաձոր/:

2003թ. հուլիսի 22-24-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից կազմակերպված «Հայաստանի Հանրապետությունում 2004-2005թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիր» խորագրով սեմինարին /ք. Ծաղկաձոր/:

2003թ. օգոստոսի 29-30-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության աջակցությամբ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի մոնիթորինգին նվիրված սեմինար-խորհրդակցությանը /ք. Սևան/:

2003թ. օգոստոսի 29-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Հայաստանում քաղաքային ջրամատակարարման տնտեսության բարեփոխումների փուլում սպառողների պաշտպանություն. վճարունակությունը և կարիքավոր տնային տնտեսությունների սոցիալական պաշտպանությունը» ցուցադրական նախագծի դիտորդական խմբի երկրորդ նստաշրջանին /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Կանանց զարգացման հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված «Խաղաղության կոալիցիայի» «Խաղաղություն ամենեցուն» լրատուի շնորհանդեսին /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 6-7-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ կողմից կազմակերպված Թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիթորինգի կենտրոնի աշխատանքային խմբի հերթական երրորդ հանդիպմանը /ք. Սևան/:

2003թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են «Հայաստանի մայրության հիմնադրամ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Բազմազավակ ընտանիքների պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի աշխատանքային քննարկմանը /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կոորդինացման բաժնի հետ համագործակցելու նպատակով նշանակված պատասխանատու անձանց հանդիպմանը /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 16-17-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ կողմից կազմակերպված «Միավորված ազգերի զարգացման աջակցության ծրագրի (ՄԱԶԱԾ) առաջնությունների որոշման» դասընթացին /ք.Սևան/:

2003թ. սեպտեմբերի 8-18-ը ՀՀ ԱՎԾ 11 աշխատակիցներ մասնակցել են ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կամակերպված «Սննդապահովում. սկզբունքներ, վերլուծություն և հաղորդակցություն» խորագրով սեմինարին /ք. Ծաղկաձոր/:

2003թ. սեպտեմբերի 19-ին ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են Պարենային ապահովման ծրագրի կողմից կազմակերպված ԵՀ պարենային ապահովության ծրագրի համակարգող հանձնաժողովի նիստին /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Հայաստանում երեխաների նկատմամբ բռնությունների վերաբերյալ սոցիոլոգիական հետազոտության» թեմայով կլոր սեղան քննարկումներին /ք. Երևան/:

2003թ. սեպտեմբերի 26-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Մոնիթորինգ խումբ» ծրագրի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կորորդինացման բաժնի կողմից կազմակերպված «Արդյունքներին ուղղված մոնիթորինգի սկզբունքներ» խորագրով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. հոկտեմբերի 4-25-ը և նոյեմբերի 13-դեկտեմբերի 13-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի կողմից «Ամերիկյան Համալսարան Հայաստանում» հաստատությունում կազմակերպված «Միկրոսոֆթ», «Փովերվոինթ», «Միկրոսոֆթ Էքզել», «Միկրոսոֆթ Աքսես» համակարգչային դասընթացներին:

2003թ. հոկտեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Եվրամիության տեխնիկական օգնության կորորդինացման բաժնի կողմից կազմակերպված «ՏԱՄԻՍ-ի 2004-2005թթ. գործողությունների ծրագրի» քննարկմանը /ք. Երևան/:

2003թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ ԱՎԾ 2 աշխատակիցներ մասնակցել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության մասնակիցների վերապատրաստման ծրագրի շրջանակում Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպված «Կիրառական տնտեսագիտության ուսումնասիրություն» խորագրով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. նոյեմբերի 1-2-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է «Անդրկովկասում թմրամիջոցների դեմ պայքարի ծրագրի» շրջանակում թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվության ազգային մոնիթորինգի կենտրոնի կողմից կազմակերպված «Թմրամիջոցների կանխարգելում և թմրամիջոցների տեղեկատվական ցանց» թեմայով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. նոյեմբերի 10-11-ը ՀՀ ԱՎԾ 3 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Եվրախորհրդի կողմից կազմակերպված Եվրոպական սոցիալական ապահովության օրենսգրքի պահանջներին հանրապետության սոցիալական ապահովության համակարգի համապատասխանելիու-

թյան ուսումնասիրությանը և սոցիալական ապահովության եվրոպական օրենսգրքի գրոյական գեկույցի կազմմանը նվիրված սեմինար-խորհրդակցությանը /ք. Երևան/:

2003թ. նոյեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից կազմակերպված «Էկոլոգիական տեղեկատվություն, կրթություն և հասարակության իրազեկություն» թեմայով սեմինարին /ք. Երևան/:

2003թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի կողմից Վրաստանում և ՀՀ արտաքին գործերի նախարարության համագործակցությամբ կազմակերպված «ԵՄ կառուցվածքը. կառավարման մարմինները, նրանց գործառնությունները և համագործակցությունը որոշումների կայացման գործընթացում» շնորհանդեսին /ք. Երևան/:

2003թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության և ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից կազմակերպված «Զբոսաշրջության զարգացումը Հայաստանում» կլոր սեղան քննարկումներին /ք. Երևան/:

2003թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՏԱՄԻՍ-ի «Աջակցություն Ազգային համակարգման կենտրոնին» ծրագրի կողմից կազմակերպված «Դոնորների գործողությունների համակարգման լավագույն օրինակներ» և «Ծրագրի մոնիթորինգի և գնահատման հիմնադրությունների գործնական ձեռնարկ» փաստաթղթերի ներկայացմանը /ք. Երևան/:

2003թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Հայաստանում հազարամյակի զարգացման բնապահպանական նպատակների ուսումնասիրություն» թեմայով խորհրդաժողովին /ք. Երևան/:

2003թ. դեկտեմբերի 22-23-ը ՀՀ ԱՎԾ 1 աշխատակից մասնակցել է ՄԱԶԾ և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության /ԵԱՀԿ/ կողմից կազմակերպված «Կրթությունը հանուն կայուն զարգացման» թեմայով տարածաշրջանային սեմինարին /ք. Երևան/:

2003թ.-ին ՀՀ ԱՎԾ են այցելել 12 հանձնախմբեր, 17 փորձագետներ Շվեդական ՍԱԼԱ կազմակերպությունից, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից, Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտից, Շվեդիայի վիճակագրական ծառայությունից, ԱՄՀ-ից, Եվրամիության վիճակագրական ծառայությունից՝ ՏԱՄԻՍ ծրագրի շրջանակում, Համաշխարհային բանկից Աղքատության հաղթահարման ռազմավարության կարողությունների ստեղծման ֆինանսավորման համար բազմադրոնր դրամաշնորհի շրջանակում, ԱՄՆ հաշվառումների բյուրոյից՝ տեխնիկական և խորհրդատվական օգնություն ցուցաբերելու նպատակով ռեզիդնալ վիճակագրության, պարենի ապահովության ծրագրի, տվյալների տարածման և սպառողների հետ աշխատանքի, տեղեկատվական տեխնոլոգիաների, շրջակա միջավայրի վիճակագրության, ժամանակի օգտագործման հետազոտության, հաշմանդամների կենսապայմանների վիճակագրության, գյուղացիական տնտեսությունների ռեզիստրի, սարքավորումների ձեռքբերման, ՏՀՀՍ-ի, մենեջմենթի, բիզնես-ռեզիստրի, գյուղատնտեսության վիճակագրության,

աշխատանքի շուկայի վիճակագրության, վիճակագրական դասակարգումների, հրապարակումների և տեղեկատվության տարածման, գների վիճակագրության, ֆինանսների վիճակագրության, ռեզիդուս/ տրանսպորտի վիճակագրության, աղքատության վիճակագրության, աղքատության վերլուծության և տնային տնտեսությունների հետազոտության, մարդահամարի բնագավառներում:

Բոլոր այցելություններն արդյունավետ էին և դրական ազդեցություն գործեցին ՀՀ ԱՎԾ աշխատանքների հետագա բարելավման և զարգացման ուղղությամբ:

2003թ. ՀՀ ԱՎԾ-ում կազմակերպվել են 12 սեմինար-խորհրդակցություններ՝ նվիրված ՀՀ ԱՎԾ աշխատակիցների օտարերկրյա գործուղումների և տեղական միջոցառումներին մասնակցության արդյունքներին, վիճակագրության տարբեր բնագավառներին, ՀՀ ԱՎԾ այցելած միջազգային փորձագետների մասնակցությամբ, ինչպես նաև արդի վիճակագրական գործիքակազմի կիրառման և ստացված ժամանակակից վիճակագրական գրականության շնորհանդեսներ, որոնց ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից այցեմասնակցությունների թիվը կազմել է 241 միավոր:

2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունը դարձել է ԱՄՀ ՏՏՀՍ անդամագրվող 54-րդ երկիրը, կատարելով կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի զարգացմանը: Հայաստանի իշխանություններն անդամագրումը դիտում են որպես վիճակագրական դաշտում բազում նախաձեռնությունների զագաթնակետ: Հայաստանի Հանրապետությունը երրորդ երկիրն է ՏՏՀՍ-ին անդամակցող ԱՊՀ երկրների շարքում: Հայաստանի Հանրապետությունն ԱՄՀ ՏՏԸՀ-ին մասնակցող այն առաջին երկրների խմբում է, որոնք տեղադրել են մեթատվյալները ԱՄՀ ստանդարտների տարածման տեղեկագրում՝ օրինակ ծառայելով տարածաշրջանի այլ երկրների համար: Այս առումով էլ Հայաստանի Հանրապետությունը երկրորդ երկիրն է, որն անցնելով ՏՏԸՀ-ից ՏՏՀՍ-ին, կրկին օրինակ է հանդիսանում ՏՏԸՀ-ի մասնակիցների համար:

2003թ. դեկտեմբերի 17-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության, ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության վիճակագրության պետական կոմիտեի միջև 2003թ. դեկտեմբերից մինչև 2006թ. դեկտեմբեր ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրերի անցկացման վերաբերյալ» Փոխըմբռնման Հուշագիրը:

ՀՀ ԱՎԾ միջազգային համագործակցությունը տարբեր երկրների ազգային վիճակագրական ծառայությունների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվել է նաև վիճակագրական տեղեկատվության ընդլայնված փոխանակությամբ և թղթակցության վարմամբ /թվով 433/: Ստացվել են բազմաթիվ տարեգրքեր, տեղեկագրեր, տեղեկատուներ, մեթոդաբանական ձեռնարկներ, հարցաթերթեր և այլ վիճակագրական նյութեր:

2003թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ՀՀ ԱՎԾ կողմից լույս է ընծայվել 12 հրապարակում /ներառյալ Հայաստանի վիճակագրական տարեգիրքը լազերային սկավառակով/, 1 մամլո հաղորդագրություն, էլեկտրոնային փոստով պատասխանվել է 439 հարցումների:

2003թ. ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում տեղի են ունեցել 101 պաշտոնական հանդիպումներ, որոնց վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Տեղեկատվության միջպետական փոխանակման շրջանակում 2003թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 201 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 34-ը՝ ամսական, 50-ը՝ եռամսյակային և 117-ը՝ տարեկան: Ընդ որում, 169 վիճակագրական հարցաթերթեր նախատեսված է եղել ներկայացնել էլեկտրոնային տարբերակով և 32 հարցաթերթ՝ փոստային:

ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 2002թ. նոյեմբերի 19-20-ի որոշման համաձայն, ՀՀ ԱՎԾ կողմից 2003թ. ընթացքում ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 165 վիճակագրական հարցաթերթեր (137 էլեկտրոնային և 28 փոստային), որոնցից 31-ը՝ ամսական, 38-ը՝ եռամսյակային, 98-ը՝ տարեկան պարբերականությամբ: